

Tax Stamp ՀԱՄԱԿԱՐԳ

ՕԳՏՎՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ


Tax Stamp համակարգի ներբեռնման և օգտագործման նկարագրությունը

Քայլ 1 - Tax Stamp ծրագիրը Android համակարգով աշխատող հեռախոսում ներբեռնելու համար անհրաժեշտ է մուտք գործել play.google.com/store պաշտոնական կայք և որոնման դաշտում ներմուծել [tax-stamp](#) բառակապակցությունը:



Որոնման արդյունքներից ընտրեք անհրաժեշտ [Tax Stamp](#) ծրագիրը:

Քայլ 2 – ծրագիրը ներբեռնելու համար սեղմեք [установить](#) կոճակը:




Քայլ 3 – Ներբեռնումը ավարտելուց հետո սեղմեք **Открыть** կոճակը ծրագիրը հեռախոսում տեղադրելու համար:



Քայլ 4 – Ծրագիրը տեղադրելուց հետո բացեք այն և սեղմեք **Սկանավորել** կոճակը:



Քայլ 5 – Հեռախոսի տեսախցիկը մոտեցրեք դրոշմապիտակին այնպես, որ նրա **barcode (2d code)** լինի էկրանի ճիշտ մեջտեղում՝ քառակուսի նշման մեջ:



Ծրագիրը ինքնաշխատ եղանակով նկարահանում և սկանավորում է դրոշմապիտակը:

Քայլ 6 – Սկանավորում կատարելուց հետո, ցուցադրվում է դրոշմապիտակի սերիան, ապրանքը արտադրող կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը և հասցեն:

